



ԳՐՈՂԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՄԱՍ I

Գրոհային ստորաբաժանումների պատրաստման և կիրառման վերաբերյալ ներկայացվող շարքը նախատեսված է բոլոր կարգի հրամանատարների (անկախ մակարդակից, մոտոհրաձգային ջոկի հրամանատարներից մինչև բանակի հրամանատարներ) կողմից, ուշադիր ընթերցման և ուսումնասիրման համար: Այն նպատակ ունի օգնել հասկանալու գրոհային ստորաբաժանումներ կազմավորելու անհրաժեշտությունը և դրանց պատրաստման առանձնահատկությունները, լրացնելու բացթողումները և պարզեցնելու ժամանակակից մարտական գործողություններում գրոհային ստորաբաժանումների կիրառման մարտավարության ըմբռնումը: Այն մանրամասնորեն ներառում է գրոհային գործողությունների նախապատրաստման և իրականացման փուլերում կրակային խոցման, պահպանության, հակամարտկոցային, հետախուզական և էլեկտրոնային պայքարի, անօդաչու թռչող սարքերի և դրանց հակազդելու, կապի և ավտոմատ կառավարման համակարգերի, քողարկման (ներառյալ իրավիճակի էլեկտրոնային նմանակման մոդելավորմամբ), բժշկական, ինժեներական, երկրատարածական ապահովման և հոգեբանական պայքարի միջոցառումները: Այս նյութը չի փոխարինում կամ հակասում մարտական կանոնադրություններին, այլ լրացնում է դրանք:

1.1. Գրոհային գործողությունների նոր իրականությունը

Պատերազմը՝ «մտածելակերպ է գումարած տեխնոլոգիա»:

Մի վանեք այս պոստուլատը՝ կարծելով, որ դա ձեզ չի վերաբերում, որ պատերազմը միայն ռազմավարություն է: Ռազմավարությունը ներկա է և պարտավոր է լինել բոլորի մոտ՝ զինվորից մինչև գլխավոր հրամանատար:

Ռազմավարությունը սկսվում է այնտեղ, որտեղ սկսվում է «վերադաս պետի մարտավարությունը»: Գրոհային խմբի հրամանատարի համար ռազմավարությունը գրոհային խմբի նպատակներն են և հրամանատարի հայեցողության շրջանակներում հնարավոր գործողությունները: Մարտադաշտում գտնվող զինվորի համար ռազմավարությունը նրա գրոհային խմբի խնդիրն է: Տեխնոլոգիան, դա միայն «երկաթ և ծրագրեր չեն»: Պատերազմի տեխնոլոգիաները ներառում են սպառազինություն, ռազմական տեխնիկա և տարբեր տեխնիկական միջոցներ՝ այն ամենը ինչը (ներառյալ քաղաքացիական) ազդում է մարտադաշտում հակառակորդի վրա, ինչպես նաև որոշումների կայացման տեխնոլոգիաները, հետախուզության վարումը, վերլուծությունը, բաշխումը, արգելափակումն ու տեղեկատվության աղավաղումը, մարտական գործողությունների և մարտավարական հնարքների իրացման միջոցների տեխնոլոգիաները, տեխնոլոգիաների ուսուցումը և այլն:

ԿԱՐԵՎՈՐ Է: Եթե հակառակորդը հաղթի, ողորմություն չի լինի: Պատերազմը զինված կոնֆլիկտից տարբերվում է հիմնականում նրանով, որ պատերազմները մղվում են ոչ թե ռեսուրսների և տարածքի համար, այլ ԱՊԱԳԱՅԻ՝ աշխարհակարգի սեփական ընկալմանը համապատասխան կյանք կառուցելու հնարավորության համար: Դրանք մղվում են մինչև կողմերից մեկը հաղթանակի հասնի: Մյուս կողմից, զինված կոնֆլիկտներն ավարտվում են համաձայնություններով և ունեն ավելի առօրեական նպատակներ՝ ռեսուրսներ, տարածք և այլն:

Ժամանակակից մարտական գործողություններում սպառազինության և ռազմական տեխնիկայի նմուշների բնորոշ գործառույթներն են.

- 1) կրակային խոցումը, այդ թվում՝ ճառագայթման ինքնուղղորդվող զենքով;
- 2) հետախուզումը (առկա ֆիզիկական դաշտերում);
- 3) կապը (թվային, անալոգային, լարային և առանց դրանց);
- 4) ավտոմատացված կառավարումը;
- 5) ռադիոէլեկտրոնային ճնշումը;
- 6) համակարգչային հարձակումները;
- 7) մարտավարական քողարկումը (մարտական (այդ թվում՝ ռադիոէլեկտրոնային) իրադրության քողարկում և նմանակում);
- 8) խոցումը հզոր (կոհերենտ և ոչ կոհերենտ) էլեկտրամագնիսական ճառագայթմամբ;
- 9) հոգեբանական ազդեցությունը;
- 10) ոչ մահացու ազդեցությունը;
- 11) ռադիացիոն, քիմիական և կենսաբանական ազդեցությունը:

Անհրաժեշտ է նշել մարտական գործողությունների և մարտավարական տեխնիկական միջոցների փոփոխության բարձր արագությունը ժամանակակից տեխնոլոգիաների (ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական) ազդեցության շնոհիվ, և, առաջին հերթին, «շարժական ինտերնետի» և ժամանակակից թվային կապի միջոցների ազդեցության շնորհիվ: Մա հնարավորություն է տալիս ձևավորել մարտադաշտի կիրքերտարածքը, ինչպես նաև ավելացնել բոլոր տեսակի անօդաչու համակարգերի օգտագործումը (այսուհետ՝ ԱթՇ)՝ ցամաքային (այսուհետ՝ ԱցՇ), ավիացիոն (այսուհետ՝ ԱաՇ): Ի վերջո, մենք ականատես ենք մարդկային պատերազմից ռոբոտային պատերազմի անցմանը:

Մարտադաշտում օգտագործվում են հաղորդակցության հետևյալ հիմնական ստանդարտները.

- արբանյակային կապ՝ ինտերնետի ուղիղ հասանելիությամբ, հիմնականում Starlink տիեզերական համակարգի, ինչպես նաև Amazon-ի Kuiper համակարգի և, առանձին դեպքերում, One Web համակարգի միջոցով: Այս համակարգերի կապի տերմինալները դեռևս բավականին ծավալուն են և կարող են տեղակայվել միայն խոշոր չափի ԱաՀ-ների վրա: Սակայն առաջիկայում նախատեսվում է շահագործման հանձնել Direct-to-Cell (D2C) տեսակի արբանյակային կապի ցանցը: Դրա տերմինալները կլինեն սովորական սմարթֆոններ: Ուղեծրում արդեն կան ավելի քան հազարավոր արբանյակներ, որոնք պատրաստ են այս առաջադրանքին: Starlink համակարգի շահագործման օպերատիվությունը հիմք չի տա կասկածելու, որ այդ ծրագրերը կարող են իրականացվել մոտակա ժամանակահատվածում: Եվ այդ ժամանակ յուրաքանչյուր անօդաչու սարք կարող է համալրվել կառավարման և տվյալների փոխանցման համակարգով՝ օգտագործելով D2C տիպի տերմինալները, ինչը զգալիորեն կդժվարացնի դրա արգելափակումը ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներով:



ՆԱՏՕ-ի ԱԿՀ դասակարգման ընդհանուր սխեման

- մարտական գործողությունների գոտում քաղաքացիական բազային կայանների 2G...5G սերնդի բջջային կապի օգտագործում:

-Digital Mobile Radio (DMR) ստանդարտի տրանկային կապ, որի տերմինալներն աշխատում են կամ «փողակ-փողակ» ռեժիմով (կապի հեռավորությունը մոտ 5...10 կմ՝ կախված տեղանքից), կամ «փողակ-ռելե-փողակ» ռեժիմով (կապի հեռավորությունը մինչև ռելե մինչև 25...30 կմ, կախված է ռադիոազդանշանների տարածման ուղուց): Այս տերմինալներն օգտագործում են կայուն կողավորում և կարող են միացվել որպես մոդեմ ինտերնետին հատուկ դարպասների միջոցով, որոնք միացված են կրկնողներին, որոնց պեղծակները տեղադրվում են սյուների, ծառերի գագաթների, շենքերի տանիքների և այլ բարձունքների վրա:

- դասական անալոգային ռադիոկապ:

- թվային լայնաշերտ ռադիոկապ ստացիոնար mesh-ցանցերի և ինքնակազմակերպվող MANET - ցանցերի տեսքով, որոնք հիմնականում կարգավորվում են ամերիկյան IEEE կոնսորցիումի ստանդարտներով և իրականացվում են ժամանակակից թվային ռադիոմոդուլներում (օրինակ՝ Falcon ընտանիքի):

Պետք է նաև ուշադրություն դարձնել առաջիկա տարիներին մի քանի հազար առևտրային ցածր ուղեծրային փոքր չափի արհեստական ռադարային հետախուզական արբանյակների տիեզերական համակարգի լիարժեք շահագործման ծրագրերին, որոնք նման են Starlink համակարգի ապարատներին:

Բացի այդ, ուժերի և միջոցների գործողությունների հիմքում ընկած է Ջոն Բոյդի՝ «մարտական ցիկլի» կամ «մարտական կառավարման ցիկլի» հիմնարար հասկացությունը՝ «Բոյդի ցիկլը» կամ OODA ցիկլը (մանրամասն, տե՛ս https://www.datocms-assets.com/63284/172103360-boyd-ooda_arm.pdf հոդվածում):

Հարկ է ուշադրություն դարձնել հիմնական նպատակի ընտրությանը՝ անձնակազմի դուրս մղմանը: Ուստի ուժեղանում է անձնակազմի, հատկապես անօդաչու համակարգերի, հետախուզության, ռադիոէլեկտրոնային պայքարի մասնագետների, ինժեներական գործերի, բժիշկների և այլնի առաջնահերթ շարքից հանելու աշխատանքը, իսկ ռազմական և տնտեսական ներուժը նվազեցնելու ռազմավարության հիմքում ընկած է «Ուորդենի հինգ ռազմավարական օղակների» տեսությունը (մանրամասն, տե՛ս https://www.datocms-assets.com/63284/1758996848-warden-strategy_arm.pdf հոդվածում):

Մարտական շփման գիծը իրենից ներկայացնում է պաշտպանության գրեթե համատարած գծի խառը հատվածներ, ինչպես նաև օջախային պաշտպանությամբ հատվածներ, որոնք կազմված են բնակավայրերում և դրանցից դուրս ամրացված շրջաններից և հենակետերից: Բնակավայրերում ստեղծված պաշտպանական շրջանները և հենակետերը կարող են կահավորվել ինչպես դրանց ներսում, այնպես էլ ծայրամասերում (հատկապես արդյունաբերական գոտիներում): Բնակավայրերից դուրս գտնվող հենակետերը, որպես կանոն, հազեցած են՝ հաշվի առնելով տեղանքի օգտագործումը (բարձրունքների տարբերությունը, բնական խոչընդոտները՝ գետեր, ջրամբարներ, ձորեր, անտառներ, անտառապատ շերտեր և այլն):

Այսօր այլևս բավարար չէ մարտական գործողությունների շրջանը ընկալել որպես «հարձակման» կամ «պաշտպանության գոտի», որը ներառում է այն տարածքները, որտեղ տեղի են ունենում մարտական գործողությունները, և թիկունքային տարածքները, որտեղ ընթանում են նախապատրաստական աշխատանքներ: Ժամանակակից մարտական գործողությունների շրջանը բաղկացած է վերահսկողության գոտիներից՝ բավականին տարասեռ և անորոշ գոտիներից, որոնք գտնվում են մարտընջող կողմերի տարբեր աստիճանի վերահսկողության տակ, հաճախ համընկնում են կամ գոյություն ունեն միմյանց մեջ: Վերահսկողության գոտին վերահսկողության երկու բաղադրիչների արդյունք է՝ 1) տեսողական վերահսկողություն («տեսնել») և 2) կրակային վերահսկողություն (հակառակորդին վնաս հասցնելու ունակություն): Այս գոտիներում միաժամանակ ձեռնարկվում են գործողություններ՝ սեփական վերահսկողությունը (տեսողական և կրակային) ամրապնդելու և հակառակորդի վերահսկողությանը հակազդելու (նվազեցնելու կամ դադարեցնելու) համար: Ընկալումը դյուրին դարձնելու համար մենք կօգտագործենք վերահսկողության գոտիների գունային կոդավորմամբ նշանակում, ինչպիսին է լուսացույցը (цветофор):

Հակամարտող կողմերի մարտական շփման գծի խորքում գտնվում է **կարմիր մարտավարական գոտին**: Այսօր դրա լայնությունը մոտ 15 ... 20 կմ է: Սա շարունակական վերահսկողության և հակառակորդի կողմից խոցման մեծ հավանականության գոտի է, որի

մուտքի ժամանակ կողմերից յուրաքանչյուրի ուժերն ու միջոցները հայտնվում են հակառակորդ կողմի հետախուզության տեսադաշտում և դրանց հարվածներ են հասցվում անօդաչու համակարգերի, հրթիռների և հրետանու միջոցներով: Յուրաքանչյուր կողմում կարմիր մարտավարական գոտին վերափոխվում է (վերաճում է) **դեղին մարտավարական գոտու**: Այսօր դեղին մարտավարական գոտու լայնքը յուրաքանչյուր կողմի համար կազմում է մինչև 10...15 կմ: Մարտական շփման գծից հեռու լինելու պատճառով այն բնութագրվում է ոչ բավարար վերահսկողությամբ և հակառակորդի կողմից խոցելիության զգալի պակասով: Դեղին մարտավարական գոտին սովորաբար հաղթահարվում է տարակենտրոնացման կարգով՝ հետիոտն կամ արագընթաց շարժական միջոցներով: Երկու դեպքում էլ հետախուզման, կրակային աջակցության և մատակարարման համար կիրառվում են անօդաչու համակարգեր: Կարմիր և դեղին մարտավարական գոտիների չափերը, պարբերաբար փոփոխվում են հետախուզական և ոչնչացման միջոցների զարգացման հետ մեկտեղ և անընդհատ ավելանում են: Դեղինին հաջորդում է **կանաչ մարտավարական գոտին**՝ կողմերի հիմնական ուժերով և միջոցներով հանդեմ:

Դրա հետ մեկտեղ մարտական գործողությունների շրջանում ձևավորվում են այսպես կոչված «գորշ գոտիներ», որոնց առաջացումը պայմանավորված է հետևյալ գործոններից առնվազն մեկի առկայությամբ:

- տեղանքի տվյալ հատվածի լիարժեք օգտագործման աննպատակահարմարությունը (պատճառների համակցությամբ);

- տեղանքի տվյալ հատվածը գրավելու և պահպանելու համար ոչ բավարար հսկողությամբ (տեսողական և/կամ կրակային);

- մարտնչող կողմերի մարտավարական խմբերի ոչ համակարգային ներկայությամբ, ինչը թույլ չի տալիս այդ տարածքում ամրացում իրականացնել և վերահսկել այն:

Վերոնշյալ պայմաններում մարտավարական գոտիներում անհնար է իրականացնել գրոհային գործողություններ՝ առանց իրատեսական, մանրամասն պլանավորման և մանրակրկիտ նախապատրաստման: Բայց ղեկավարման ավագ և միջին օղակների հրամանատարները, ցավոք, մինչ օրս օբյեկտների գրոհը դիտարկում են կադապարված ձևով, առավել հաճախ՝ որպես «հետևակի սրընթաց հարձակում»: Գրոհելու համար խնդիրներ առաջադրելիս հաճախ չի իրականացվում մարտական գործողությունների տարածքի անհրաժեշտ նախապատրաստում և լրացուցիչ հետախուզում, բավարար ժամանակ չի հատկացվում կրտսեր հրամանատարների և ստորաբաժանումների կողմից նախապատրաստական փուլերի անցկացման համար (լրացուցիչ լրահետախուզում, հետախուզում, լոգիստիկայի կազմակերպում, փոխգործակցություն և այլն), պատշաճ չի կազմակերպվում մարտական և համակողմանի ապահովում:

Ուկրաինայում մարտական գործողությունների փորձը ցույց է տալիս, որ ստորաբաժանումների հրամանատարներն իրենք հաճախ թույլ տեղեկություններ ունեն իրենց ղեկավարների մտահղացումների մասին, չունեն մարտի հստակ պատկերացում և հաճախ ստանում են այնպիսի հրահանգներ, ինչպիսիք են՝ «Գնա՛ այնտեղ, այնտեղ ոչ ոք չկա» կամ «Գնա՛ այնտեղ, այնտեղ քեզ կդիմավորեն»: Երբ կապը կորչում է, դա հանգեցնում է ենթակա ստորաբաժանումների անկազմակերպվածության, բարոյալքման և, որպես կանոն, ծանր կորուստների և նահանջ դեպի ելման դիրքեր: Ավելին, հրամանատարների այդպիսի գործողությունները հաճախ կրկնվում են և կրում է շաբլոնային բնույթ: Գրոհային ստորաբաժանումների պլանավորված գործողությունները թաքցնելու համար անբավարար ուշադրություն է դարձվում հակառակորդին մոլորեցնելու (խաբելու) միջոցառումներին:

Գրոհի ղեկավարումը հաճախ իրականացվում է ավագ պետի շտաբից և կորչում է գործողությունների սկսվելուց հետո: Գրոհի համակողմանի նախապատրաստուման թուլությունը թույլ չի տալիս, դիտարկելով և հասկանալով մարտի պատկերն ամբողջությամբ, ժամանակին արձագանքել իրավիճակի փոփոխությանը, տալ ճշգրիտ նշանացուցում և գործողությունների ճշգրտումներ ինչպես գրոհային խմբերի, այնպես էլ հրետանու և մարտական ապահովման այլ ստորաբաժանումների համար:

Հաճախ կապի հնարավոր կորստի դեպքում, պատասխանատվության բաշխմամբ և ֆունկցիոնալության կրկնօրինակման հնարավորությամբ, չեն կազմակերպվում և չեն օգտագործվում առաջավոր շարժական ղեկավարման կետերը և ժամանակավոր /տեղաշարժվող ղեկավարման կետերը: Ստորաբաժանումները քիչ են մարզվում կապի խափանումներին արձագանքելու հարցում: Մարտական գործողությունների ժամանակ բավարար մշակված չեն պաշտպանությունում մարտ վարելու, գրավված դիրքերում ամրանալու, հիմնական ուժերից մեկուսացվելու և լոգիստիկ ուղիների փակման դեպքերում կիրառման հմտությունները:

Մարտի բոլոր փուլերում անբավարար ուշադրություն է դարձվում հաջողության հիմնական տարրի կազմակերպմանը՝ **համակարգային մարտական ապահովմանը** (համառոտ՝ ՀՄԱ): ՀՄԱ-ը ժամանակակից մարտում ներառում է.

1) որոշումների կայացման աջակցության ավտոմատացված, միջանցիկ («վերևից ներքև», մինչև խրամատ) համակարգի կազմակերպում, որն ապահովում է կիրառվող բոլոր ուժերի և միջոցների համար պայմանականորեն հաստատուն և գործառնական ամբողջ տեղեկատվության հավաքագրումը, պահպանումը, մշակումը (ներառյալ վերլուծությունը) և օգտագործումը՝ սպասվող և իրավիճակային գործողությունների կանխատեսման, պլանավորման, համակարգման և վերահսկման համար (չշփոթել կառավարման ամբողջական կազմակերպման հետ);

2) մարտական գործողությունների վարման շրջանում հակառակորդի համալիր (այդ թվում՝ առաջին հերթին անօդաչու համակարգերի կիրառմամբ) կրակային խոցումը, ղեկավարման կետերի ու միջոցների, օդային և վերգետնյա հետախուզության ներդրման ուժերի ու միջոցների, անօդաչու համակարգերի ուժերի ու միջոցների, կենդանի ուժի, տեխնիկայի, կրակային միջոցների, հետախուզության և ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցների, կապի ու նավիգացիայի համակարգերի ճնշումը, նրա ականապայթյունային արգելափակոցների և ինժեներական միջոցների ոչնչացումը կամ վնասազերծումը;

3) մատչելի ֆիզիկական դաշտերում հետախուզում և պահպանություն, այդ թվում՝ հետախուզաազդանշանային սարքերի կիրառմամբ;

4) հակամարտկոցային պայքարը;

5) ռադիոէլեկտրոնային պայքարը;

6) հակազդեցությունը անօդաչու համակարգերին.

- կրակային խոցում (այսպես կոչված «ստորին և միջին երկնքի» հակաօդային պաշտպանություն);

- կլինտիկական ազդեցությունը (այսինքն՝ արագաշարժ անօդաչու թռչող սարքին համահարված տալու միջոցով կալանում);

- ռադիոէլեկտրոնային հակազդեցությունը (ինչպես տարր ռադիոէլեկտրոնային պայքարի);

7) կապ (լարային և անլար, այդ թվում օգտագործելով անօդաչու համակարգերը) և ավտոմատացված կառավարումը;

8) մարտավարական քողարկումը (քողարկում և մարտական (ներառյալ ռադիոէլեկտրոնային) իրադրության իմիտացիա);

- 9) բժշկական ապահովումը;
- 10) ռադիացիոն, քիմիական և կենսաբանական պաշտպանությունը;
- 11) ինժեներական ապահովումը;
- 12) երկրատարածական ապահովումը;
- 13) հոգեբանական պայքարը (ներառյալ սոցիալական տեխնոլոգիաները համացանցում);

14) օդերևութաբանական ապահովումը:

Հաշվի առնելով թվային տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումը ժամանակակից միջավայրում, համակարգային մարտական ապահովումը պահանջում է ավելի մեծ ուշադրություն և անընդհատ կատարելագործում: Հաշվի առեք գործողությունների տարբեր փուլերում հուսալի կապի կազմակերպման, մասնավորապես՝ կապի կորստի դեպքում լուծումների վերաբերյալ անուշադիր վերաբերմունքը:

ԿԱՐԵՎՈՐ Է: Հետախուզությունը (բոլոր հասանելի ֆիզիկական դաշտերում), ռադիոէլեկտրոնային և հոգեբանական պայքարը, անօդաչու համակարգերի կիրառումը և դրանց հակազդեցությունն այսօր իրականացվում են ոչ միայն բրիգադ և ավելի բարձր մակարդակներում, ինչպես նախկինում կարգավորվում էր ղեկավար փաստաթղթերով, այլ սկսած դասակի (գրոհային խմբի) մակարդակից:

Մարտական գործողություններ վարելու փորձը ցույց է տվել զինծառայողների վատ պատրաստվածությունը՝ կողմնորոշման և կրակային շփման տարբեր հեռավորությունների վրա փոքր մարտավարական խմբերում գործողությունների, ինչպես նաև ենթախմբերի միջև անմիջական տեսանելիության կորստի, հիմնական ուժերից մեկուսացված գործողությունների, գրահատեխնիկայի հետ փոխազդեցության (չնայած դրա կիրառումը հազվադեպ է դառնում) և հատկապես տարբեր անօդաչու համակարգերի հետ, քաղաքային պայմաններում, անտառապատ տարածքներում մարտերի ժամանակ, հենակետերում խրամատներում գործելիս, ինչպես նաև տարբեր տեսակի զենքի և ռազմական տեխնիկայի (ստանդարտ և գրավված) օգտագործման անբավարար հմտություններում:

Այսպիսով, մարտական գործողությունները (մեթոդներն ու մարտավարությունը) արագ փոխվում են: Անօդաչու համակարգերի (օդային և ցամաքային) զանգվածային կիրառման տեխնոլոգիական առաջընթացը, մարտավարական իրազեկվածության բարձրացումը, ժամանակակից մարտավարական և մասնագիտացված ԱԿՀ-ների (անօդաչու համակարգերի, հետախուզության, էլեկտրոնային պատերազմի համար) ու արհեստական բանականության համակարգերի ներդրումը շտաբներում, ՄՌՏ-ում հանգեցրել են գործերի գործողությունների վերաբերյալ որոշումների կայացման արդյունավետության բարձրացմանը և հակառակորդին համապարփակ հարվածներ հասցնելուն:

Սրա հետ առնչված մարտական պատրաստության պլանավորման, անցկացման և մարտական գործողությունների վարման առաջնահերթ խնդիրներն են.

- մարտական գործողությունների շրջանի մոնիտորինգ և հետախուզության կազմակերպում իր ամբողջ խորությամբ («տեսնելու» ունակություն);

- կայուն, բարձր արագության կապի ցանցերի և ԱԿՀ-ների հիման վրա մուտքային տեղեկատվության զանգվածների մշակման արդյունավետության բարձրացում, դրա վերլուծություն, գնահատում, վերջնական կանխատեսումների և գործողությունների տարբերակների տրամադրում, թիրախների ոչնչացման առաջնահերթություն, թիրախների նշանագուցում և հաշվարկներ;

- հակառակորդի ստորաբաժանումների և զորամասերի ղեկավարման կետերի հայտնաբերման և ոչնչացման գործողություններ;

- ղեկավարման կետերի, ընդունիչ-հաղորդիչ համակարգերի (վերահաղորդիչների), կապի գծերի, ինչպես նաև հետախուզության և ՌԷՊ միջոցների, համալիրների և համակարգերի հայտնաբերում և ոչնչացում/խոցում/ճնշում;

- ղեկավարման կետերի, անօդաչու համակարգերի հաշվարկների հայտնաբերում և ոչնչացում;

- հակառակորդին վնաս պատճառելու բոլոր միջոցների համալիր, բազմամակարդակ կիրառում;

- կայուն համակարգային մարտական ապահովում և մարտական գործողությունների ընդհանուր ապահովում **«վերահսկում – զավթում – ամրացում – վերահսկում»** ցիկլի կիրառում մարտի բոլոր փուլերում;

- մարտական գործողությունների վարման շրջաններում անխափան լոգիստիկայի կազմակերպում;

- մարտի մեջ մտցնելու համար շտաբների և ստորաբաժանումների պատրաստման և ուսուցման կազմակերպում առանց հակառակորդի զենքի հասանելիության գոտում գտնվող տարածքներում մեծ զանգվածների և ռեսուրսների կենտրոնացման (մարտի մեջ մտնելու փուլային մոտեցում), ինչպես նաև բարձր արագությամբ մարտի մեջ մուտք գործելու կիրառում՝ օգտագործելով հատուկ միջոցներ (բազզիներ, քվադրոցիկլներ, մոտոցիկլետներ, բարձր բեռնատարողությամբ ցամաքային անօդաչու համակարգեր);

- գրոհի օբյեկտին գրոհային ստորաբաժանման ապահով մոտեցման, ինչպես նաև արագ մատակարարման և տարհանման կազմակերպում;

- անօդաչու համակարգերի մասնագետների, ԱԿՀ և թվային համակարգերի օպերատորների, ռադիոինժեներների պատրաստման կազմակերպում՝ ելնելով կադրային բավարար հազեցվածության անհրաժեշտությունից՝ կադրային ռեզերվի ձևավորմամբ:

Ժամանակակից հարձակողական գործողություններում հաշվի առնելով մարտական գործողությունների շրջանների բարդ շարակարգվածությունը և տեխնոլոգիապես զարգացած սպառազինության ազդեցությունը գրոհային ստորաբաժանումների դերն առավել է կարևորվում: Գրոհային ստորաբաժանումը հարվածային ուժ է, որը ունակ է ճեղքել հակառակորդի պաշտպանությունը՝ ապահովելով զորամասի կամ միավորման հետագա հարձակումը:

ԿԱՐԵՎՈՐ Է: Գրոհային ջոկատը միշտ գտնվում է երկու իրավիճակներից մեկում՝ գրոհի կամ գրոհի նախապատրաստման:

Պետք է ընդգծել, որ մարտական առաջադրանքն ավարտելուց հետո անձնակազմի, սպառազինության և տեխնիկայի լիարժեք վերականգնումը հետագա գործողությունների նախապատրաստման սկիզբն է:

Հրամանատարների կողմից որոշումների կայացման ալգորիթմի օպտիմալացումը գրոհային գործողությունների հետ կապված մեծացնում է ստորաբաժանումների արդյունավետությունը և նվազագույնի հասցնում կորուստները: Դուք կարող եք զգալիորեն բարելավել գրոհային ջոկատների հրամանատարների աշխատանքի արդյունավետությունը, առաջին հերթին, հետևյալի հաշվին.

- որոշումների կայացման գործընթացում ներգրավելով ստորաբաժանումների կրտսեր հրամանատարներին՝ գրոհային խմբերի և խառը ստորաբաժանումների հրամանատարներին (տրված և օժանդակող ստորաբաժանումներ);

- մարտական գործողությունների կազմակերպում ստորաբաժանումների կրտսեր հրամանատարների կողմից և նրանց որոշումների կայացում «ներքևից», այսինքն՝ գործողության տարբերակների և գրոհային խմբի գլխավոր հրամանատարի որոշման

հիման վրա՝ ՀՄԱ ուժերի և միջոցների և ավագ հրամանատարի միջոցների համապատասխան աջակցությամբ:

- մարտական խնդրի կատարման տարբերակային ներդրում:

1.2 Մարտական սկզբունքներ

Անհրաժեշտ է հիշել և հասկանալ, որ յուրաքանչյուր մարտ ունի հստակ սահմանված նպատակ (կամ բազմաթիվ նպատակներ): Այս թեզի պարզությամբ այն հաճախ կամ մոռացվում է, կամ չի կարող ձևակերպել բուն նպատակը: «Գնանք գրավենք», «պետք է վերցնենք կամ զավթենք»՝ նպատակներ չեն հանդիսանում և հասկանալի չեն ոչ զինվորին, ոչ հրամանատարին: Նպատակները հիմնականում դրված են ավագ հրամանատարների մարտական հրամաններում և կարգադրություններում ու պետք է համապատասխանեն ավագ պետի մարտավարական պլաններին, ինչպես նաև հստակորեն փոխկապակցված լինեն տվյալ տեղամասում նախորդող և հաջորդող գործողությունների հետ:

Հաշվի առնելով, որ մարտը սահմանափակող օրենքներ չունի (մարտի բարոյականությունը հաճախ որոշվում է մարտում գոյատևելու ցանկությամբ), և իրավիճակն ու գործողությունները երբեք ամբողջությամբ չեն կրկնվում, խորհուրդ է տրվում մարտական գործողությունների նախապատրաստումն ու անցկացումը դիտարկել մարտական սկզբունքների հիման վրա:

Մարտական սկզբունքները հանդիսանում են մարտական կանոնագրքերում սահմանված մարտավարական սկզբունքների կրճատ և հարմար ձևակերպումը, ինչպես նաև հիմք են հանդիսանում թե՛ պլանավորված, թե՛ մարտադաշտում առաջացող և թե՛ մարտական պատրաստության ընթացքում հրամանատարի/մարտիկի կողմից նպատակահարմար և անհրաժեշտ որոշումներ կայացնելու համար: Այլ կերպ ասած, դրանք գործում են սկսած զինվորից և բարձր: Միշտ պետք է հիշել. «ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԾՈՒԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՒՃԱՊԸ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ ՄԻՆՉԵՎ ԳՆԴԱԿԻ ԽՈՑՈՒՄԸ»:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ մարտական սկզբունքներով:

Գոյատևումը՝ մարտիկի/ստորաբաժանման, որպես ակտիվ մարտական միավորի պահպանման միջոցառումների համալիր է: Ներառում է ինչպես մարտական գործողությունների նախապատրաստման, այնպես էլ մարտավարա-կրակային, մարտավարական, ինժեներական, ֆիզիկական և ռեսուրսային պատրաստության, կիրառման կայուն ավտոմատացման միջոցների կառավարման և կապի, հետախուզության, ղեկավարման, ռադիոէլեկտրոնային պայքարի, անօդաչու համակարգերի և միջոցների հակազդման համակարգային կիրառումը, այնպես էլ բժշկական և այլ տեսակի պատրաստվածության ապահովումը:

Խոցումը կրակային և մարտավարական առաջադրանքներ կատարելիս նպատակային, համակարգված, ռեսուրսների վրա հիմնված գործողություն է, որն օգտագործում է ԲՈԼՈՐ հասանելի միջոցները հակառակորդին վնաս հասցնելու համար (առանց սահմանափակելու դրանց կիրառման շրջանակը և ազդեցությունը):

Այս գործողությունները փոխկապակցված են և չպետք է դիտարկվեն առանձին: Գոյատևելու համար պետք է խոցեք, խոցելու համար պետք է գոյատևեք: Իսկ գոյատևելու և խոցելու համար պետք է ունենաք մարտադաշտը «տեսնելու» ունակություն:

Տեսնելը մարտադաշտի իրավիճակը իմանալու և հասկանալու ունակություն է՝ հնարավորինս խորությամբ ծածկելով այն բոլոր հնարավոր հսկողության և հետախուզու-

թյան միջոցներով, անընդհատ վերլուծելով տեղանքը և կանխատեսելով հակառակորդի հնարավոր գործողությունները, ինչպես նաև գործառնականորեն վերահսկելով հակառակորդի և յուրային ուժերի գործողությունները ամբողջ ռազմաճակատի երկայնքով և հնարավորինս խորությամբ: Հրամանատարների հիմնական խնդիրն է ստեղծել շարունակական հրամանատարության անընդհատ և արդյունավետ շղթաներ՝ հիմնված «տեսնելու» ունակության վրա:

Ղեկավարումը շարունակական և նպատակային գործողությունների ցիկլային համակարգ է, որն ապահովում է հնարավորություն:

- հասկանալ իրավիճակը (հիմնվելով «տեսնելու» ունակության վրա);
 - կանխատեսել իրավիճակի զարգացման տարբերակները («կանխատեսման» ունակություն);
 - պլանավորել առաջադրանքները՝ հիմնվելով իրավիճակի զարգացման ամենահավանական տարբերակների վրա;
 - համակարգել (փոխգործակցության կազմակերպում, այդ թվում՝ խառը, տրված և աջակցող ստորաբաժանումների հետ, մարտից առաջ և ընթացքում);
 - վերահսկել պլանավորված խնդիրների կատարումը;
 - արձագանքել իրավիճակի ցանկացած փոփոխություններին՝ օգտագործելով «տեսնելու» ունակությունը և ճկունորեն «ընթացքից» ուղղորդել գործողությունները:
- Այս դեպքում իր ուրույն տեղն ունի հետևյալ հիերարխիան (ներքևից վերև):

Արձագանքել Վերահսկել-Համակարգել Հասկանալ-Կանխատեսել-Պլանավորել

«Տեսնելու» ունակության հիման վրա անհրաժեշտ է մտածել թշնամու փոխարեն՝ գնահատելով և կանխատեսելով նրա հավանական գործողությունները: Մա նշանակում է կանխատեսել նրա գործողությունները, հաշվի առնել և նախապատրաստվել հնարավոր զարգացումներին: Միևնույն ժամանակ, չպետք է մտքում հետևել սեփական ծրագրին, այլ, ընդհակառակը, պլանավորել սեփական գործողությունները վատագույն սցենարի համար:

Հակառակորդի գործողությունները տեսնելու և կանխատեսելու ունակության հիման վրա անհրաժեշտ է ստեղծել պայմաններ, որպեսզի հակառակորդը սխալներ թույլ տա (այսինքն, նրան սխալի մեջ ներքաշել և այդ ճանապարհով տանել) և դրանք շահագործվեն սեփական նպատակների համար: Ներկայումս սա գնալով կղժվարանա, քանի որ հակառակորդը կարող է զանգվածաբար կիրառել բազմաշարակարգված հետախուզական, կապի և ավտոմատ կառավարման համակարգեր, որոնք զգալիորեն կարագացնեն բազմազան տեղեկատվության հսկայական ծավալի մշակումը, ինչպես նաև արձագանքման տարբերակների պատրաստի լուծումների ստեղծումը մարտավարական և ավելի բարձր մակարդակում:

Եթե կարծում եք, որ հակառակորդը հիմար է, ուրեմն դուք ավելի հիմար եք:

Մարտի դաշտը «տեսնելով» և հակառակորդին կանխատեսելով անհրաժեշտ է, ելնելով նպատակից և իրավիճակից, մեծացնել գործողությունների պատրաստակամությունը: Մա սկզբունք է ստորաբաժանման, մարտիկի և սպառազինության համար:

Ցանկացած գործողության դեպքում ձգտեք ընդլայնել ճակատը: Մա վերաբերում է դիտարկմանը («տեսնելու» ունակությանը), դիրքին, կրակին, մանևրին, կապին, հնարավորություններին: Մտածողությունը և դիտարկումը պետք է լինեն ավելի լայն և խորը: Անընդհատ բարելավեք ձեր դիրքը:

Ճակատի ընդլայնումը և «տեսնելու» ունակությունը թույլ են տալիս բացահայտել «անցքերը» (խոցելիությունները), այսինքն, ձեր և հակառակորդի թույլ կողմերը՝ հաշվի առնելով փոփոխվող իրավիճակը, ինչպես նաև «բռունցքվելու» կենտրոնացնելով ջանքերը: Բացահայտված «անցքերը» ջանքերի կենտրոնացման պոտենցիալ ուղղություններն են: Այս սկզբունքը վերաբերում է բոլոր ռեսուրսներին:

Ձեր թույլ կետը / օղակը պետք է փակվի, իսկ հակառակորդը՝ պետք է օգտագործվի:

Մի՛ վերաբերվեք մարտական գործողություններին որպես հրաձգարանի: Ընդունեք, որ հակառակորդը անընդհատ տեսանում է ձեզ, և նա կարող է ունենալ թաքնված ռեսուրսներ: Միշտ հաշվի առեք հակառակորդի հանկարծակի հայտնվելու և ազդեցության հնարավորությունը:

Ցուցաբերեք ճկունություն: Ցանկացած փոփոխություն չպետք է կաթվածահար անի հրամանատարին և ստորաբաժանմանը: Նրանք պետք է հարմարվեն փոփոխվող իրավիճակին: Հուսալի պլանը հաշվի է առնում իրավիճակի բոլոր փոփոխությունները և ունի լուծման տարբերակներ:

Որոշումները, գործողությունները և ապահովումը պետք է լինեն հնարավորինս հուսալի և պարզ: Անհուսալի գործողությունները և « ֆոկուս-հմտությունները» բացառվում են մարտական պատրաստությունից:

Կրակային նախաձեռնությունը՝ բոլոր կրակային և խոցման այլ միջոցների ժամանակին, համալիր օգտագործումը, ապահովում է ձեր ստորաբաժանման գոյատևումը, հակառակորդի ոչնչացումը/ճնշումը բոլոր հեռավորություններում և նրա հետագա դիմադրության անհնարինությունը: Ստորաբաժանման, մարտիկի և կրակի մանևրումը ապահովում է գոյատևումը և մարտական խնդրի կատարումը:

Կարևոր է նշել, որ թվարկված մարտական սկզբունքները շատ առումներով մանրամասն կիրառվում են ժամանակակից մարտերի ընթացքում:

1.3 Պայքար տեղեկատվության համար

Ժամանակակից հեղափոխության էությունը ռազմական գործերում: Այսօր շատ է խոսվում մարտադաշտում ժամանակակից թվային տեղեկատվական տեխնոլոգիաների կարևորության մասին: Ի վերջո, դրանք ռազմական գործում ընթացող հեղափոխության հիմնական շարժիչ ուժն են: Այդուհանդերձ տեղեկատվությունը ցանկացած գործունեության հիմքն է: Տեղեկատվությունը միշտ կարևոր է եղել մարտական գործողություններում: Ժամանակակից ռազմական հեղափոխության էությունն այն է, որ նոր թվային տեղեկատվական տեխնոլոգիաները միայն ավելացրել են ավելի շատ տեղեկատվություն, շատ ավելին... և բարելավել են դրա հավաքագրման, պահպանման, մշակման, փոխանցման և օգտագործման բոլոր գործընթացները: Արդյունքում, պարզ է դարձել, որ այն կողմը, ով ավելի լավ է մշակում տեղեկատվությունը (թե՛ սեփականը, թե՛ հակառակորդինը), այդ թվում՝ ավելի արագ (այսինքն, ավելի արագ մարտական ցիկլեր/մարտական հրամանատարության ցիկլեր), ունի հսկայական առավելություն:

Ըստ էության, այժմ հեղափոխական թռիչքը, որը կապված է մարտադաշտում տեղեկատվության իրավիճակի հետ, նման է այն բանին, որ նախկինում դասական շախմատ էք խաղացել, որտեղ կանոնները պարզ էին և ծանոթ, և այժմ երկչափ շախմատային տախտակից ստիպված էք անցնել եռաչափ շախմատային տարածություն, որտեղ երկու չափումներին ավելացվել է երրորդը, որը բնութագրում է տեղեկատվությունը ոչ միայն առանձին մարտիկների, միջոցների և ստորաբաժանումների, այլև ընդհանուր առմամբ

հակամարտող կողմերի փոխադարձ համընկնող մարտական ցիկլերում: Այդպիսի «շախմատ» ամբողջ աշխարհը դեռ պետք է սովորի խաղալ:

Հետախուզություն և քողարկում: Մարտադաշտում տեղեկատվության հետ աշխատանքը սկսվում է հետախուզությունից: Հետախուզությունը ցանկացած մարտական ցիկլի առաջին փուլն է: Հետախուզությունը միջոցառումների և գործողությունների համակարգ է, որը իրականացվում է հակառակորդի, տեղանքի և եղանակի մասին տեղեկատվություն ստանալու համար, որն անհրաժեշտ է մարտական գործողություններին նախապատրաստվելու և վարելու համար: Այն հնարավորություն է տալիս «տեսնել»:

Հետախուզության խնդիրներն են.

- նույնականացումը (որոնումը և հայտնաբերումը), բացահայտումը (հայտնաբերվածի կառուցվածքի ճանաչումը, դասակարգումը, ըմբռնումը) և հետևումը;

- մարտական գործողությունների տարածքում տեղանքի բնութագրերը, որոնք մեծապես որոշում և օգնում են ենթադրել երկու հակամարտող կողմերի գործողությունների հնարավորությունները, մարտավարությունը: Տեղանքը առանցքային դեր է խաղում՝ միաժամանակ հանդիսանալով ուսումնասիրության օբյեկտ, ֆոն և պայման, որն ազդում է հակառակորդի և յուրային ուժերի ու միջոցների գործողությունների, ինչպես նաև հետախուզություն իրականացնելու հնարավորությունների և եղանակների վրա;

- պատասխանատվության գոտում հակառակորդի գործողությունների կազմը, վիճակը և հավանական բնույթը;

- պատասխանատվության գոտում գործող հակառակորդի ստորաբաժանումների կազմի, վիճակի և դիրքի փոփոխությունները՝ հաշվի առնելով այլ ուղղություններից պահուստների ավելացումը;

- ռոտացիայի և տարհանման երթուղիների, ռազմամթերքի և նյութական միջոցների տեղափոխումը առաջնագիծ;

- հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի գործողությունների շրջանները;

- հակառակորդի կողմից անօդաչու համակարգերի, դրանց կառավարման ուղիների, տվյալների փոխանցման, նավիգացիայի և կառավարման վերադաս մարմինների հետ փոխգործակցության կիրառումը;

- հակառակորդի հրամանատարական կետերի և ղեկավարման կետերի գտնվելու վայրը և գործունեությունը;

- հակառակորդի հետախուզական և ռադիոէլեկտրոնային պայքարի ուժերի և միջոցների տեղակայումը և գործունեությունը;

- հակառակորդի ԱԿՀ-ի ծավալման, կազմի, շարակարգման և գործունեության փոփոխությունների, կապի և մարտական ապահովման այլ տեսակների կարգը;

- հակառակորդի պահեստագործի կազմը և մարտունակությունը, դրանց տեղափոխման կարգը, ժամկետները և երթուղիները;

- հակառակորդի սատարող ուժերի և միջոցների կազմի փոփոխությունը;

- հակառակորդի լոգիստիկ աջակցության համակարգի փոփոխությունները, ներառյալ պահեստագործի տեղափոխումը:.

Հետախույզը փնտրում է տարբեր տեղեկություններ (տեղեկատվություն)՝ դրանք հայթայթելով, առանձնացնելով և միավորելով հակառակորդի հետախուզման հատկանիշներ պարունակող օբյեկտների, գործողությունների, որոշակի հատկությունների (օրինակ՝ տեղանքի) կամ հակառակորդի մտահղացման հետախուզական նշանների մեջ:

Հետախուզությունն իրականացվում է բոլոր հայտնի ֆիզիկական դաշտերում նշանների օբյեկտների նկատմամբ:

Օբյեկտի նշմարելիությունը նրան անդրադարձնող և ճառագայթող հատկությունների գումարն է, որոնք որոշում են դրա հայտնաբերման և/կամ ճանաչման և/կամ զենքն ուղղելու ունակությունը դիտարկման տարբեր ֆոնին:

Մարտավարական օղակում հետախուզության տեսակներն են.

- ըստ գործողությունների ոլորտների՝ ցամաքային, օդային և տիեզերական (ծովայինը այստեղ չի դիտարկվում);

- ըստ կիրառվող տեխնիկական միջոցների.

1) **օպտիկատրոնային հետախուզում** (առանց էլեկտրոնիկայի կոչվում է օպտիկական)՝ ուլտրամանուշակագույն, տեսանելի և ինֆրակարմիր տիրույթների *էլեկտրամագնիսական ալիքների* ընդունում և վերլուծություն, որոնք ստեղծվում կամ վերաձևակերպվում են հետախուզական օբյեկտների կողմից: Ներառում է.

ա) հեռուստատեսային հետախուզություն;

բ) ինֆրակարմիր կամ ջերմատեսիլ պատկերների հետախուզում (չպետք է շփոթել ռադիոջերմային հետախուզության հետ);

գ) լազերային հետախուզում;

2) **ռադիոջերմային հետախուզում**՝ ռադիոտիրույթում էլեկտրամագնիսական ալիքների ջերմային ճառագայթման միջոցով օբյեկտների հայտնաբերում և գտնվելու վայրի որոշում (չպետք է շփոթել ինֆրակարմիր հետախուզության հետ);

3) **ռադիոէլեկտրոնային հետախուզում** (էլեկտրամագնիսական ալիքների ռադիոալիքային տիրույթում):

Ներառում է:

ա) ռադիոհետախուզություն՝ ռադիոէլեկտրոնային կապի միջոցների (ռադիոկայանների) ճառագայթման որոնում, հայտնաբերում, նույնականացում, պելենգացում, գրավում և վերլուծություն;

բ) ռադիոտեխնիկական հետախուզում՝ կապի համար չօգտագործվող ռադիոէլեկտրոնային միջոցների ճառագայթման որոնում, հայտնաբերում, նույնականացում, պելենգացում եւ վերլուծություն;

գ) ռադիոտեղորոշիչ հետախուզություն՝ նշանակետերի պարամետրերի (կոորդինատներ, շարժման ուղղություն և այլն) մասին տեղեկատվության ստացում (կոչվում է պարամետրիկ հետախուզություն) և տարածքի ռադիոտեղորոշիչ քարտեզների՝ լուսանկարների անալոզների ստացում (կոչվում է տեսողական հետախուզություն);

4) **մագնիսաչափական** կամ մագնիսական **հետախուզությունը**, դա ականազերծման և քողարկված օբյեկտների որոնման նպատակով Երկրի մագնիսական դաշտում նրանց կողմից առաջացող խանգարումների չափման հիման վրա օբյեկտների գտնվելու վայրի որոշումն է;

5) **ակուստիկ** կամ ձայնային (ձայնաչափական) **հետախուզումը** (ներառյալ հիդրոակուստիկ)՝ մեխանիկական ալիքների աղբյուրների գտնվելու վայրի որոշումն է (չպետք է շփոթել էլեկտրամագնիսական ալիքների հետ) օդում և ջրում (օրինակ՝ կրակող հրանոթ, ականանետեր, արձակման կայանքներ, արկերի պայթյունի վայրեր, աշխատող անօդաչու թռչող սարքեր);

6) **սեյսմիկ հետախուզություն**՝ երկրի մակերևույթում և դրա ներսում մեխանիկական ալիքների աղբյուրների տեղորոշման որոշում;

7) **համակարգչային հետախուզություն**՝ համակարգչային ցանցերում թվային տվյալների ձեռք բերում, հավաքում, առաքում և վերլուծություն՝ լարային և անլար (չպետք է շփոթել ռադիոհետախուզության հետ.);

8) **օդերևութաբանական հետախուզություն**՝ որոշակի վայրում և ժամանակի որոշակի պահին մթնոլորտի ներկա վիճակի և (կամ) ապագա վիճակը որոշելու համար տեղեկատվության ձեռք բերում և վերլուծություն;

9) **Ռադիացիոն, քիմիական, կենսաբանական հետախուզում**:

Հետախուզության տարբեր տեսակները միավորվում են՝ ապահովելով, օրինակ, հրետանային, ինժեներական և այլ հետախուզությունները:

ԿԱՐԵՎՈՐ Է: Հակառակորդի հետախուզությունը միշտ փնտրում է ձեզ՝ օգտագործելով բոլոր ֆիզիկական հարթակները:

Արբանյակային օպտիկական և ռադիոտեղորոշիչ հետախուզումն իրականացվում է անընդհատ՝ 4...6 ժամվա դիտման ժամանակահատվածով, և տարածքը դիտելուց 10...15 րոպե անց մարտավարական խոցման միջոցների թիրախավորման փոխանցմամբ: Որակը, որով վարում է արբանյակը, ապահովում է նույն որակը ինչ Google Maps հավելվածն է:

Օպտիկական դիտարկման հնարավորությունները խիստ կախված են եղանակային պայմաններից: Բայց տեսակային ռադիոտեղորոշիչ հետախուզությունը զուրկ է այս թերությունից: Նրա որակը այսօր մոտ է լուսանկարների որակին:

Եթե հակառակորդի արբանյակները ձեզ չեն նկատել, ապա նրա օդային հետախուզությունը կարող է դա անել (օրինակ՝ «Mavic 3» տիպի ԱԹՀ-ները կամ նմանատիպ սարքերը): Այն տարածքը, որը «Mavic 3» տիպի ԱԹՀ օպերատորը կարող է միաժամանակ ստուգել առանց խոշորացման (առանց «зум»-ի), կազմում է մոտ 400×400 մ: Առավելագույն խոշորացման դեպքում այս տարածքը կազմում է մոտ 25×25 մ: Հետևաբար, այն տարածքում, որտեղ իրականացվում է օդային հետախուզությունը, շարժման արագությունը պետք է բացառի օբյեկտի բացահայտ հայտնաբերման հնարավորությունը՝ առանց մեծացնելու: Սովորաբար դա ձեռք է բերվում 1 րոպեի ընթացքում մոտ 10 մ արագությամբ սողեսող անցնելով:

Օգտագործվում են նաև գետնին հիմնված շարժվող թիրախների հետախուզման համակարգեր: Սա բազմակի սենսորների ցանց է (հիմնականում օպտիկական, սեյսմիկ և ակուստիկ), որոնք բաշխված են տարածության մեջ և նախատեսված են իրական ժամանակում մեծ տարածքների, դիրքերի, կենտրոնացման շրջանների, զորքերի տեղաշարժերի, ջրային խոչընդոտների և անցումների մոնիթորինգի համար: Սա հնարավորություն է տալիս ոչ միայն հայտնաբերել, այլև ճանաչել թիրախները (թրթուրավոր և անվավոր տրանսպորտային միջոցներ, անձնակազմ), ինչպես նաև գրանցել շարժման ժամանակը, ուղղությունը և արագությունը, ինչպես նաև ռազմական տրանսպորտային միջոցների շարասյուների երկարությունը: Այս համակարգերը կարող են նաև ծածկել ականապատ դաշտերը և այլ արգելափակոցները, տեղակայվել կասկածելի կամ նախապես նշանակված հեռավոր ականապատման շրջաններում (բնագծերում) կամ այլ պլանավորված տարածքներում: Շարժման սենսորները արձագանքում են մարդկանց և տրանսպորտային միջոցների առկայությանը մինչև 3 կմ հեռավորության վրա: Անձի կամ տրանսպորտային միջոցի հայտնաբերման հեռավորությունը տեսախցիկի և ջերմատեսիլի միջոցով կարող է լինել մինչև 20 կմ, իսկ տանկի համար՝ մինչև 40 կմ:

ԿԱՐԵՎՈՐ Է: Հետախուզության դեմ պաշտպանությունը ՔՈՂԱՐԿՈՒՄՆ Է: Քողարկումը ռադիո-, ռադիոտեղորոշիչ, օպտիկական և ակուստիկ դաշտերում՝ գոյատևման հիմքն է: Քողարկման մեջ նույնիսկ աննշան թերացումը, հանգեցնելու է ձեր բացահայտմանը: Այդ դեպքում միայն ժամանակի հարց է՝ ինչպես կօգտագործի հակառակորդը հետախուզությունը: Բայց հիշեք, որ նրանք անպայման կօգտագործեն այն:

Շարժման ընթացքում և տեղում գտնվելու ժամանակ անհրաժեշտ է մտածել ջերմաքողարկիչ միջոցների կիրառման մասին: Փորձը ցույց է տվել, որ ջերմատեսիլի հայտնաբերումից պաշտպանվելու համար կան հետևյալ միջոցները՝

- խոչընդոտի առկայությունը;

- ջերմամեկուսիչ նյութի հաստ կտոր, որը ձգվում է ջերմային աղբյուրից առնվազն կես մետր հեռավորության վրա (որքան ուժեղ է ջերմային աղբյուրը, այնքան մեծ է այն հեռավորությունը, որի վրա պետք է ձգվի էկրանը);;

- կառուցվածքի կամ կոնստրուկցիայի տարր, որը ջերմության աղբյուրի ազդեցությունից չի կարողանում տաքանալ մինչև իր լրիվ խորությունը;:

- հատուկ կոստյումների, պոնչոների, թիկնոցների և համազգեստի տարրերի օգտագործումը, որոնք թաքցնում են մարմնի ջերմային ճառագայթումը (նախապես փորձարկվել են մարտական պայմաններում): Պոնչո օգտագործելիս պետք է հաշվի առնել դրա քողարկող հատկությունները տեղանքի, եղանակի և օրվա ժամանակի հետ: Պաշտպանիչ թիկնոցների և պոնչոների եզրերն ունեն դիմակավորող ջերմային ուրվագծեր;

- բնական (փտած կոճղեր, արևոտ եղանակին տաքացող մակերեսներ) կամ այլ ջերմային աղբյուրների (անտառային կամ քաղաքային հրդեհ, խիտ ծխի վարագույր) օգտագործումը՝ ջերմային հետքը քողարկելու (պայծառությունը նվազեցնելու, քայքայելու, ձևը փոխելու) համար;

- շարժիչների և վառարանների աշխատանքից դուրս եկող տաք օդի ցրումը (տեսանելիության նվազեցում)՝ խողովակներից (օդափոխության համակարգերից) տաք օդի դուրս գալու վայրերում մեծ թվով ճյուղեր տեղադրելով:

Տեխնիկայի դիրքերը քողարկելու համար կարևոր է օգտագործել մեծ առարկաներով (տներ, պատեր, կառույցներ, ծառեր և հատուկ կառուցված ամբարտակներ ու բլուրներ) ծածկված տարածքներն ու գոտիները: Ծածկված տարածքները նվազեցնում են առարկաների հայտնաբերման արդյունավետությունը:

Մարտական գոտում գտնվելու ընթացքում ԵՆԲԵՔ մի օգտագործեք անձնական կապի սարքերը, որոնք մուտք ունեն ինտերնետ կամ սովորական բջջային հեռախոսները (ցանցերը) տեղեկատվություն փոխանակելու համար: Հակամարտության գոտում բջջային կապի և ինտերնետի առկայությունը, ինչպես նաև դրանց հետևելու և գաղտնի տեղեկատվությունը գողանալու միջոցները, բազմաթիվ մարտահրավերներ են առաջացնում մարտական գործողությունների համար: Սա ժամանակակից պատերազմի ոլորտներից մեկն է, և հակառակորդը այն արդյունավետորեն օգտագործում է: Բաց ցանցերի (բջջային ցանցեր և ինտերնետ) ցանկացած օգտագործում պահանջում է սարք, որը կապված չէ օգտատիրոջ հետ («մաքուր» հեռախոս, սմարթֆոն, պլանշետ և այլն) և փոխանցված տեղեկատվության նախապես համաձայնեցված կողմերի միջև համակարգ (պետք է հայտնի լինի բոլոր բաժանորդներին): Կապի սարքեր օգտագործելիս հաշվի առեք փոխանցված հաղորդագրությունների խափանման և բաժանորդների գտնվելու վայրի վտանգի բարձր հավանականությունը: Նման կապի ուղիների օգտագործումը արդարացված է միայն այն դեպքերում, երբ տվյալների արագ փոխանցման կարևորությունն ավելի մեծ է, քան սեփական գտնվելու վայրը բացահայտելը կամ հակառակորդի որևէ գործողությունների փաստից առաջացող վնասը:

Հիշե՛ք: Անձնական բջջային հեռախոսը միացել է բջջային ցանցին՝ 15 րոպե անց ամբողջ խումբը կոչնչացվի:

Հեռախոսության հիմնական սկզբունքը գաղտնիությունն է: Հետևաբար, նույնիսկ եթե կարծում եք, որ մարտադաշտում անմիջական մոտակայքում հակառակորդ չկա,

չպետք է մոռանալ, որ ցանկացած ռադիոկապ կարող է գաղտնալսվել տասնյակ կիլոմետր հեռավորության վրա գտնվող հակառակորդի հետախուզության մասնագետների կողմից:

Ռադիոկապի միջոցով ցանկացած խոսակցություն պետք է վարվի բանակցային աղյուսակներով, որոնք պետք է հնարավորինս հաճախ փոխել:

Մնարթֆոնը մարտում ընկեր է, օգնական և թշնամի, եթե այն նախապես պատրաստված չէ մասնագետների կողմից՝ մարտական խնդիրների համար: Կարևոր է նաև հիշել, որ ոչ բոլորին կարելի է վստահել և համարել մասնագետ: Ինչպես ասում են՝ վստահի՛ր, բայց ստուգի՛ր: Երբ միանում եք ինտերնետ հասանելիություն ունեցող ցանկացած ցանցի (նույնիսկ եթե դուք անձամբ չգիտեք նման հասանելիության մասին), անպատրաստ մնարթֆոնը կապվում է այն երկրի հեռակա սերվերների հետ, որը արտադրել է դրա օպերացիոն համակարգը: Ըստ էության, ձեր տեղեկատվությունը կընկնի թշնամու ձեռքը: Եվ ամեն ինչ, որ կհայտնվի ինտերնետում, այնտեղ կմնա հավերժ:

Տեղեկատվությունը ձեռք բերելուց հետո այն պետք է պահպանվի և մշակվի՝ կանխատեսելու և պլանավորելու իրենց ուժերի և միջոցների գործողությունները ոչ միայն կրակի, հարվածների և մանևրի տեսքով, այլև տեղեկատվության համար պայքար մղելու համար, այսինքն՝ հակառակորդի վրա տեղեկատվական, տեխնիկական և տեղեկատվական – հոգեբանական ազդեցություն գործադրելու և նրա կողմից նման ազդեցություններից պաշտպանվելու համար:

1.4 Տեղեկատվատեխնիկական պայքար

Տեղեկատվատեխնիկական պայքարը մարտադաշտում տեղեկատվության համար պայքարի տեխնիկական բաղադրիչն է, որը ներառում է կողմերի հարձակողական և պաշտպանական գործողությունները՝ օգտագործելով տեղեկատվատեխնիկական միջոցներ բոլոր ֆիզիկական դաշտերում և կիրառարածքում: Այսինքն՝ տեղեկատվատեխնիկական պայքարը միայն ռադիոէլեկտրոնային պայքար չէ, իսկ ռադիոէլեկտրոնային պայքարը միայն մարտադաշտում արդեն սովորական դարձած հակառակորդի ԱԹՀ-ների ռադիոէլեկտրոնային հակազդեցությունը չէ:

Ռադիոէլեկտրոնային պայքարի ազդեցության ոլորտը (այստեղ և այսուհետ նկատի ունենք տեղեկատվատեխնիկական պայքարը) բաժանվում է խոցման և ճնշման:

Ազդեցության օբյեկտի ճնշված վիճակն այն է, երբ ազդեցության ընթացքում այն գործունակ չէ, բայց այդ ազդեցության ավարտից հետո աշխատունակությունը վերականգնվում է: Ազդեցության օբյեկտի խոցված վիճակն այն է, երբ դրա արդյունավետությունը չի վերականգնվում նույնիսկ ազդեցության ավարտից հետո: ՌԷՊ-ի հիմնական սկզբունքները հետևյալն են:

ՌԷՊ-ը ենթադրում է ոչ միայն հակառակորդի համակարգերի աշխատանքի արգելափակում և նրա կողմից նմանատիպ ազդեցության հակազդում, այլև հակառակորդի հետախուզական միջոցների ապատեղեկատվության ակտիվ միջոցառումներ, այդ թվում՝ կեղծ իրավիճակի ստեղծման միջոցով: ՌԷՊ-ը ներառում է նաև հետախուզություն (առաջին հերթին՝ ՌԷՀ), որը խախտում է հակառակորդի տեղեկատվության գաղտնիությունը:

Ռադիոէլեկտրոնային պայքարը միշտ սկսվում է հետախուզությունից: Առանց հետախուզական միջոցների ռադիոէլեկտրոնային պայքարի վարումը, ինչպես հաճախ է պատահում անօդաչու համակարգերի ռադիոէլեկտրոնային արգելափակման միջոցների շահագործման ժամանակ, կույր պայքար է: Միայն հետախուզությունը տեղեկատվություն

է տալիս այն մասին, թե ռադիոէլեկտրոնային պայքարի որ միջոցներն են արդիական ժամանակի այս պահին: Մեկ ժամից, առավել ևս մեկ օրից ամեն ինչ կարող է փոխվել:

Հետախուզական միջոցները ստանում են ազդանշաններ կամ արձակում են զոնդային ազդանշաններ (օրինակ՝ ռադիոտեղորոշիչ կայաններ կամ ռադիոտեղորոշիչ համակարգեր): ՌԷՊ միջոցները կարող են ներառել (կամ չներառել) հետախուզության ենթահամակարգ: Բայց դրա պարտադիր տարրը ճնշման / խոցման ենթահամակարգն է, որը միայն ազդանշաններ է արձակում կամ փոխում է տարբեր ֆիզիկական միջավայրերում ալիքների տարածման պայմանները:

1.5. Տեղեկատվական-հոգեբանական պայքար

Մարտադաշտում առանցքային նշանակություն ունի «ուղեղների համար» պայքարը: Այն նաև տեղեկատվական-հոգեբանական պայքարն է (որպես տեղեկատվության համար պայքարի բաղկացուցիչ մաս) կամ, կարճ ասած, հոգեբանական պայքար: Դրա պոտենցիալ արդյունավետությունը ոչ պակաս է, քան զինված դիմակայության մնացած բոլոր միջոցների արդյունավետությունը միասին վերցրած: Ի վերջո, միայն դա կարող է իրականացնել մարտական առաքելությունները՝ առանց հակառակորդին վնասելու:

Տեղեկատվական-հոգեբանական պայքարում օգտագործում են նույն տեղեկատվական անվտանգության հատկությունները, ինչ տեղեկատվատեխնիկական պայքարում՝ կոնֆիդենցիալությունը, ամբողջականությունը և մատչելիությունը: Այնուամենայնիվ, անձի վրա ազդելու մեթոդները բնականաբար յուրահատուկ են: Սովորաբար, նախ խախտվում է ազդեցության սուբյեկտի տեղեկատվության (այսինքն՝ անհատի կամ անհատների խմբի) կոնֆիդենցիալությունը ապա, ստացված տեղեկատվության հիման վրա, խախտվում է նրանց տեղեկատվության ամբողջականությունը (ապատեղեկատվություն) և/կամ դրա մատչելիությունը: Բայց հաճախ խախտվում է միայն ազդեցության սուբյեկտի մատչելիությունը:

Տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունների նպատակներն են.

1) կարևոր տեղեկությունների դուրս բերումը (տեղեկատվության գաղտնիության խախտում);

2) ազդեցության սուբյեկտին շարքից հանելը (տեղեկատվության կրիչի մատչելիության խախտում);

3) ազդեցության սուբյեկտի աշխատանքի արդյունավետության նվազեցումը (տեղեկատվության կրիչի մատչելիության խախտում);

4) երկարաժամկետ նպատակներով ապակառուցողական տեղեկատվության լցումը (տեղեկատվության ամբողջականության խախտում);

5) ազդեցության սուբյեկտի կառավարելիության ձեռքբերումը (տեղեկատվության ամբողջականության խախտում):

Տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունները մարտական պայմաններում իրականացվում են.

- ազդեցության սուբյեկտի կենտրոնական նյարդային համակարգի (ԿՆՀ) վրա ֆիզիկական և հոգեբանական ճնշմամբ / վնասումով կամ հյուծվածությամբ, որը ձեռք է բերվում մշտական լարվածության մեջ պահելով;

- մարտական պայմաններում գիտակցության հետ աշխատանքով, որն իրականացվում է հետևյալ սկզբունքով. «բարի խոսքով և զենքով կարելի է հասնել շատ ավելին, քան միայն բարի խոսքով»:

ԿԱՐԵՎՈՐ Է: Կենտրոնական նյարդային համակարգը հյուծվածությունից պաշտպանվելու միջոցը հանգիստն է: Արդյունավետ հանգիստը ձեռք է բերվում քնելով (նույնիսկ

15-20 րոպե) կամ մարմնի բոլոր մկանները, հատկապես դեմքի մկանները լիովին և միտումնավոր թուլացնելով, ներքին ինքնախոսությունը դադարեցնելով ու մտավոր գործունեությունը միտումնավոր անջատելով:

Կենտրոնական նյարդային համակարգը ճնշելու կամ վնասելու համար կարող են օգտագործվել ոչ մահացու միջոցներ.

- այնպիսիք, որոնք առաջացնում են վախի զգացում (օրինակ՝ լսելի տիրույթից ցածր կամ բարձր ակուստիկ ալիքների օգտագործում);

- կամ, որոնք սահմանափակում են գործառույթները (օրինակ՝ կուրացնելը, շշմեցնելը):

Գիտակցության մանիպուլյացիայի հիմքում ընկած է ուղեղի անվերահսկելի ունակությունը՝ հիշելու իրադարձությունները և ստեղծելու շրջապատող իրականության մասին գիտելիքներ՝ օգտագործելով սեփական ինտելեկտը:

Գիտակցության վրա ազդելը իրականացվում է անձին փոխանցելով **մեմեր**: Մեմը (անգլ.՝ meme) ցանկացած գաղափար, խորհրդանիշ, եղանակ, իրավիճակ կամ գործողության ընթացք է, որը գիտակցաբար կամ անգիտակցաբար փոխանցվում է մարդուց մարդու խոսքի, գրի, տեսանյութի, ծեսերի, ժեստերի և այլ միջոցներով: Մեմերը կարգավորում են մարդու գիտակցությունը, ինչպես լարողը լարում է ջութակը: Մեմերը կարող են օգտակար կամ կործանարար լինել մարդու համար: Բայց ամեն դեպքում, դրանք նման են մարդու մարմնում (պաթոզեն միկրոօրգանիզմների կոլեկտիվ պատկեր) և համակարգչային համակարգերում գտնվող «վիրուսների»: Մարդը, որի գիտակցությունը վարակվել է մեմով, կարող է այն փոխանցել բոլոր նրանց, ովքեր շփվում են նրա հետ: Մեմերը թիրախավորում են մարդկանց այն խմբերին, որոնք նույնականացվում են որոշակի բնութագրերի ամբողջությամբ: Դրանք գործում են հավանականորեն և նախապես որոշված, այսինքն՝ խմբի անդամների մեծամասնության վրա, այլ ոչ թե յուրաքանչյուր անհատի վրա:

Թշնամու մեմերի ազդեցությունը գիտակցության վրա հիմնված է.

1) կեղծ տեղեկատվության մեջ ճշմարտության հյուսման վրա, որը ներկայացվում է որպես խորը միտք, որի հետ անհնար է չհամաձայնել՝ հետագա մանիպուլյացիայի համար քննադատական ընկալումը մեղմելու համար;

2) երկրի հրամանատարության և ռազմաքաղաքական ղեկավարության վարկաբեկմանը, նրանցից թշնամու կերպարի ձևավորման վրա;

3) ահաբեկման վրա;

4) իմաստի իմիտացիայի վրա;

5) մեզ արատավորող գործողությունների բեմականացման վրա;

6) օգտագործել միայն այն փաստերը, որոնք հաստատում են պարտադրվող տեսակետը և անտեսել բոլոր հակասությունները;

7) որոշում կայացնողների վարկաբեկման վրա;

8) քննադատել ոչ թե փաստարկները, այլ անձին;

9) փաստերի մանիպուլյացիա, ներառյալ տեղեկատվության խճանկարային ընկալման ձևավորման վրա, երբ այն բաժանվում է բեկորների, առանձին իրադարձությունների և փաստերի և ներկայացվում է մի քանի տեղեկատվական ուղղություններով, որպեսզի օբյեկտը չկարողանա դրանք միացնել և հասկանալ որպես ամբողջություն;

10) նույն պնդումը բազմիցս կրկնելը, որը վաղ թե ուշ ստիպում է մարդկանց այն ընկալել որպես ճշմարիտ («ջուրը ծակում է քարը»);

11) «պիտակավորում» պարզեցված և խիստ բացասական կերպար ստեղծելու համար, որպեսզի համախմբի «յուրայիններին» և արդարացի «օտարներին» դեմ ցանկացած գործողություն;

12) իրական փաստերից ուշադրությունը շեղման վրա.

- կործանարար տեղեկատվության վրա կենտրոնանալու գիտակցված կողմնակալությամբ;

- ուշադրության վերակողմնորոշում, երբ ապակառուցողական տեղեկատվությունը ներկայացվում է էմոցիոնալ կամ վառ արտահայտված ճշմարիտ հաղորդագրությունների ֆոնի վրա;

- «տեղեկատվական աղմուկի» ձևավորումը «տեղեկատվական հագեցվածության» առաջացման համար, երբ մարդը ի վիճակի չէ ճանաչել իսկապես կարևոր տեղեկատվությունը հաղորդագրությունների ընդհանուր հոսքում;

- հուզական գույն, որը մասամբ փոխարինում է տեղեկատվության իմաստային բովանդակությանը և պարտադրում փաստերի կործանարար ընկալում;

13) թեզերի, առաջնահերթ խնդիրների փոխարինումը մտացածին (աննշան), այդ թվում՝ «սրբազան գիտելիքների» փոխանցմամբ;

14) կոչին «բոլորն այդպես են անում», «ականատեսների» և «կարծիքի առաջնորդների» ցույցեր;

15) հակառակորդի կողմից մեզ վերագրելով իր սեփական բացասական հատկությունները կամ դրոշմապատճառները;

16) սադրանքների վրա;

17) մարդուն համակարգված առաջարկ, որ նա սխալ է ընկալում իրականությունը;

18) տրամաբանության խախտումը կամ այն համոզմունքը, որ մեկ փոքր իրադարձությունն անխուսափելիորեն կհանգեցնի աղետալի հետևանքների՝ առանց պատճառահետևանքային կապի ապացույցների;

19) կեղծ երկրնտրանքի ձևավորում (միայն երկու ծայրահեղ տարբերակ՝ անտեսելով ոչ միայն երկբևեռ հատվածից դուրս գտնվող տարբերակները, այլև միջանկյալ տարբերակները);

20) տեղեկատվությունը որպես հավաստի ընկալելու անձի հակվածությունը, եթե այն չի հակասում նախկինում ստացված տեղեկատվությանը և այլն:

Գիտակցության վրա ազդեցության հիմքում ընկած է "մաքուր թերթի" սկզբունքը, ըստ որի՝ մարդու կողմից ինչ-որ բանի մասին լսած առաջին ճշմարտանման կարծիքը դառնում է իր սեփականը: Հետևաբար, հակառակորդի կործանարար տեղեկատվական ազդեցությունները ավելի հեշտ է կանխել, քան շտկել դրանք:

Եթե հնարավոր չէ կանխել տեղեկատվական և հոգեբանական ազդեցությունները գիտակցության վրա, ապա պետք է հիշել, որ դրանք առաջացնում են.

1) վախ՝ ամենամեծ ազդեցությունն ունի;

2) մեղքի, անարդարության զգացում;

3) ամոթ;

4) եսասիրություն;

5) դեկավարության կողմից ներկայացված տեղեկատվության կեղծություն;

6) պատրանքներ, ունայնություն, կեղծ վստահություն իր գերազանցության նկատմամբ;

7) առըջվածություն նյութական բարիքների հետ:

Եթե զինձառայողը ստանում է իր մոտիվացիային վնասող տեղեկատվություն (տեսա-նյութեր, լրատվամիջոցների հաղորդագրություններ, հակառակորդի կամ նրա շահերից ելնելով գործող անհատների կողմից արված հայտարարություններ), այն չպետք է արգելվի, այլ պետք է ապացուցվի որպես կեղծ կամ բեմադրված՝ որպես օրինակ օգտագործելով այլ տեղեկատվություն: Բոլոր հրամանատարների խնդիրն է ինտերնետի օգտագործման

պայմաններում գտնել հերքող կամ վարկաբեկող նյութեր և դրանք ցուցադրել կասկածող զինձառայողներին՝ դրանց իմաստի մանրամասն բացատրություններով: Մարդկանց չի կարելի արգելել մտածել, բայց նրանց կարելի է մտածելու տեղիք տալ, որը նրանց կհանգեցնի ճիշտ եզրակացությունների:

Անբավարար ռազմահայրենասիրական դաստիարակության պատճառով շատ զինձառայողներ չեն հասկանում մարտական գործողություններին իրենց մասնակցության պատճառները: Ժամանակակից պատերազմի իրականություններում (անձնակազմի կողմից տարբեր հուսալիության մեծ թվով տեղեկատվական աղբյուրների առկայության և հաճախ դիտավորյալ կեղծ աղբյուրների առկայության պայմաններում) ռազմահայրենասիրական աշխատանք կատարելու հաստատված մեթոդները (օրինակ՝ մարտական թռուցիկների (չշփոթել գերի հանձնվելու կոչերի հետ) և պատի թերթերի տեսքով) հնացել են:

Ինչ-որ բան համոզող կործանարար տեղեկատվական և հոգեբանական ազդեցություններին հասնելը կարող է ժամանակի ընթացքում ձգվել: Այս ընթացքում մարդը պետք է ձեռք բերի հակահամոզվածություն, այսինքն՝ հակառակում համոզվելու: Դրա համար պահանջվում է.

- զարգացնել քննադատական մտածողությունը;
- վերահսկել հույզերը;
- որոնել առաջնային աղբյուրներ և ստուգել տեղեկատվությունը;
- հնարավորություն ունենալ հայտնի դարձած ոչ միանշանակ տեղեկատվությունը քննարկել ողջախոհ ծառայակիցների կամ հրամանատարների հետ;

- Իմանալ ճշմարտությունը ձեր ուժեղ և թույլ կողմերի մասին և հիշել, որ դուք կարող եք սխալվել, բայց չեք կարող ստել:

Մասնագետների համար մարտական սթրեսը նորմալ բնական միջավայր է, բայց իր երկարատև ազդեցությամբ և անպատրաստների համար կարող է բացասական ազդեցություն ունենալ առաջացնելով.

- ագրեսիա: Վիրավորանքներ, իմպուլսիվություն, ուղղակի ագրեսիայի կողմնորոշում «ինչ-որ մեկի, ինչ-որ բանի վրա», ուրիշների ընկալումը որպես սպառնալիք: Ի՞նչ անել: Հանգիստ խոսեք, խուսափեք մեղադրանքներից և սպառնալիքներից, ուշադրությունը սևեռել իր գործողությունների, առաջադրանքի կամ հետևանքների վերացման կատարմանը): Եթե հնարավոր է, ապա փայտ կտրեք, բղավեք;

- հիստերիա: Արցունքներ, խուճապ, հավակնություն, թատերականություն, ուշադրություն դարձնելու ցանկություն: Ի՞նչ անել: Բոլորափակել ուշադրությունը (բարձր ձայն, անսպասելի ժեստ), մեջքով շրջել դեպի ուրիշները, խոսել հաստատական, հստակ և պարզ, հրամայել, «Կանգ ա՛ռ», «Լռի՛ր», «Հավաքի՛ր քեզ», ջուր տալ և այլն;

- ընդարմացված վիճակ (стресс): Նշաններ՝ անշարժություն կամ արգելակվածություն, լռություն կամ խոսքի դանդաղեցում, բողոքարկման արձագանքի բացակայություն: Ի՞նչ անել: Ապահովել անվտանգություն (հեռացնել կրակի գծից), հստակ խոսել, դիմել անունով կամ ազգականչի նշանաբառով, ինտենսիվորեն շփել ավերքը, ականջները;

- դող: Նշաններ՝ մկանների հաճախակի ջղաձգական կծկում, փոքր անվերահսկելի շարժումներ, կակազություն, խոսքի ընդհատում: Ի՞նչ անել: Հանգստացնել, բացատրել ռեակցիայի պատճառը, բռնել ուսերից, ստիպել սեղմել բռունցքները, շունչը պահել 5 ... 7 վայրկյան և արտաշնչումով հանգստանալ, խմել քաղցր թեյ:

«Հողանցման» տեխնիկա: Խուճապի ժամանակ անհրաժեշտ է ուշադրության կենտրոնացմանը. պտտել փամփուռը ավիի մեջ, ստուգել լարանը (տուրնիկետը), կարդալ ժեստոնի մակագրությունը, օգտագործել սառնաշաքար և այլն:

«Հունցումից» հետո միշտ առաջանում է «ետզլորք»: Սա չօգտագործված էներգիա է, որը խանգարում է քնելուն, առաջացնում է ձեռքերի դող և տեղում նստելու անկարողություն: Լարվածությունը մեղմելու համար անհրաժեշտ է պայթուցիկ ֆիզիկական ծանրաբեռնվածություն (օրինակ՝ «burpee» (բյորփի) ֆիզիկական վարժությունները):

Մթերսից դուրս գալու համընդհանուր միջոցներն են ֆիզիկական վարժությունները, սնունդը, քունը, գիրք կարդալը, կատակելը, երաժշտական «սաունթերեկները», իսկ վթարային իրավիճակներում՝ ադոթքը, հայիոյանքը:

Վախը գոյատևման հիմքն է: Այն մոբիլիզացնում է մարմինը և հոգեբանությունը՝ հնարավորինս արագ գործելու և փրկվելու համար: Երբեմն վախը կարող է դառնալ անվերահսկելի, խանգարել քննադատաբար մտածելուն և համարժեք գործելուն և վերածվել խուճապի: Երբ հասկանում եք, որ խուճապը սկսվել է և կորցնում եք վերահսկողությունը, նստեք ծնկների վրա, շնչեք և նայեք շուրջը: Մտովի ինքներդ ձեզ հարցեր տվեք. «Ո՞վ է եմ ես», «Որտե՞ղ եմ ես», «Որտե՞ղ եմ իմ ընկերներն ու զենքերը», «Ի՞նչ առաքելություն ունեմ»: Եվ, իհարկե, պետք է անընդհատ կրկնես ինքդ քեզ «ՊԵՏՔ Է»: Եթե վախեցած ես, պառկիր, շուրջդ նայիր և նույն հարցերը տուր ինքդ քեզ՝ ավարտելով նույն «ՊԵՏՔ Է» որոշումով: Վախը կարող է և պետք է կառավարել, զսպել և օգտագործել քնօգտին: Նպատակը վախը «ոչնչացնելը» չէ, այլ այն մարտական ռեսուրսի վերածելը:

Վախը նաև «հարված հասցնելն» է, ոչ միայն «վազել» կամ «տեղում սառչելը»: Ինքներդ ձեզ «Հանգստացի՛ր», ասելու փոխարեն, ավելի լավ է ասել՝ «Սա է ինձ իսկապես լիովին լիցքավորում»: Մահը կույր է, բայց հեռվից զգում է խուճապը: Հիշեք ասացվածքը. «Ով սարսափում է – նա վախճանվում է»: Հակառակորդին հանդիպելիս խուճապի մի մատնվեք, հանգիստ մնացեք, գործեք լկտիաբար և հանդուգն: Կրիտիկական իրավիճակում ձեր զենքը արագ և ագրեսիվորեն օգտագործելու ունակությունը զգալիորեն մեծացնում է «ջրից չոր» դուրս գալու հնարավորությունները:

Տեղեկատվական և հոգեբանական ազդեցության ամենատարածված մեթոդներն են.

- մարտական շփման գծում մեքենաների կամ անօդաչու թռչող սարքերի վրա տեղադրված բարձրախոսերով ձայնահեռարձակումները;

- թռուցիկներ;

- բաց ռադիոկապի ուղիներով ռադիոեթերները;

- SMS-հաղորդագրությունները;

- առցանց քարոզչությունը;

- վարկանիշային լրատվամիջոցների «ֆեյքային» ակաունտների միջոցով ապատեղեկատվության տարածումը;

- անձնական տվյալներ ստանալու համար «ֆեյք» կամավորական նախագծերի ստեղծումը («Հարկավոր են անօդաչու թռչող սարքեր: Լրացրեք ձեր՝ լրիվ անվանումը, կոչումը, պաշտոնը, զորամասը, հեռախոսը»);

- «Մեղիա ծուղակը»: Նպատակը սոցիալական ցանցերում զինծառայողի հետ կեղծ հաշիվների միջոցով ծանոթանալն է՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար կամ նրան «զայթակղելու» և գրավելու համար;

- «զանգ հարազատներին»: Նպատակը վախեցնելն է, մանիպուլյացիան, խարդախությունը:

Գերվել: Ամեն ինչ տեղի է ունենում արագ և սթրեսի պայմաններում, որպես կանոն, փուլերով. գերում-հարցաքննում-ուղեկցում-պահում: Առավել կոշտը՝ առաջին երեքն են: Մի նայեք աչքերին, «Խաղացեք միամիտի դեր», մի փոխանցեք հարազատների հեռախոսահամարները: Ակտիվություն չցուցաբերել, առաջինը չխոսել, շատ ու բարձր չխոսել: Չեզոք սառը երկխոսություն, առանց ագրեսիայի, առանց հետաքրքրության: Հաղթում են նրան, ով

որոշել է հանձնվել: Ընդունել տեղի ունեցածի անշրջելիությունը, պահպանել կամքը, չհավատալ հակառակորդին, չհամաձայնել հարցազրույցին, աջակցել ուրիշներին խոսքով և գործողություններով: Պայքարի և գոյատևի - փախի - Զոհվի հերոսաբար:

Աղբյուրը` : <https://publishing.intelgr.com/index.php/izdannye-raboty?id=1106>